

ՍԻՐԱՆԵՍ ՎԱՐԴՊԵՏԸ ՀԱԼԻՉՈՐ ԳՅՈՒՂԻՑ*

Սերգեյ Հախվերյան

Դոցենտ

Գորիսի պետական համալսարան

Բանապի բառեր: Վարդպետ, Ամաղուի Նորավանք, Հալիծոր, Գյաճորի համալսարան, Մոսկվա:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի ենթաշրջանի տարածքում հայտնի են համահայկական ճանաչում, պատմա-ճարտարապետական, հոգևոր-մշակութային արժեք ներկայացնող շինություններ՝ Տաթևի վանք, Բղենո Նորավանք, Հալիծորի ու Տաթևի հարանց անապատներ, Վերիշենի Ս. Յօհվանի եկեղեցի և այլն: Մեզ հասել են միայն որոշ կորողների կառուցումը հովանավորած անձանց անունները, իսկ դրանց ճարտարապետների, քարգործ վարպետ շինարարների մասին տարեգրությունը լրում է: Այնուամենայնիվ, շնորհիվ վիմագիր արձանագրությունների, մեզ հայտնի է դարնում ծնունդով Գորիսի Հալիծոր գյուղացից մի նշանավոր ճարտարապետի անուն: Խոսքը միջնադարյան հայ նշանավոր ճարտարապետ-շինարար, քարգործ-վարպետ՝ վարդպետ Սիրանեսի մասին է¹:

Սյունյաց ամենաերևելի ու հզոր Օրբելյան իշխանը եղել է Սմբատը (1253-1273): Նա մահացավ Թավրիզում, թաղվեց Ամաղուի Նորավանքում: Սմբատին փոխարինած Սյունյաց իշխանաց իշխան Տարսայինը 1275թ. Սիրանես ճարտարապետին հանձնարարում է եղբոր գերեզմանի վրա կառուցելու Ս. Գրիգոր եկեղեցին, որը հայտնի է «Սմբատի դամբարան» անունով: Սիրանեսի նախագծած ու կառուցած գողտրիկ եկեղեցին Ալիշանի բնորոշմանը «սագաշեն» է², միանավ բազիլիկի տիպի, թաղակապ, երկթեք տաճիքով, իսկ արևմտյան կողմից՝ այունազարդ շքամուտքով:

Ս. Գրիգոր եկեղեցին Ամաղուի Նորավանքի եկեղեցիների խմբի կարևոր բաղադրիչներից է:

*Հոդվածը ընդունված է 17.12.14:

¹ Սիրանեսը վարդպետ է անվանված վիմագիր արձանագրության մեջ: Վարդպետը վարդապետն է: Ղ. Ալիշանի, Ք. Օրբելու և այլոց կարծիքով վիմագրերում հիշատակվող շենքեր կառուցող վարդպետ-վարդապետները ճարտարապետ-շինարարներն են (տես Գրիգորյան Գ., Նվիրատվություններ Ամիկ եկեղեցիներին ու վանքերին 9-14 դդ., Եջմիածին, 2002, էջ 112): Կարծում ենք դա նաև տեսական գիտելիք ու մեցողի բնութագրակամն է, իր մասնագիտությամբ վարդապետական գավազանի տիրացած անձի բնութագրակամը:

² Անգմբեր՝ սագի կամ տապանի նմանությամբ (տես, Ածարյան Յր. Շայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 153):

Սյունյաց տաճ պատմիչ Ստ. Օրբելյանը անդրադարձել է իր հայր Տարսայիծի կողմից հորեղբայր Սմբատի համար դամբարանատան կառուցմանը: Նա գրում է. «Իր եղբայր Տարսայիծը Սմբատի համար (այնուհետև) կառուցում է դամբարանատուն՝ սուրբ Գրիգոր ամունով Եկեղեցին, այնտեղ է փոխադրում Եղբօր աճյունը՝ հավերժական հանգստյան»¹: Պատմիչը խոսում է Ս. Գրիգոր Եկեղեցի դամբարանի կառուցման մասին, բայց չի հիշատակում Եկեղեցին կառուցող ճարտարապետի անունը, որը Եղել է իր ժամանակակիցը: Պատմիչը չի նշում նաև Եկեղեցու հյուսիսային պատի վրա իր հոր կողմից արված արձանագրության մասին: Բարեբախտաբար արձանագրությունը անխաթար վիճակում հասել է մեր ժամանակները: Այն հրատարակել կամ ուսումնասիրել են Ս. արքեպ. Զալայանցը, Ե. Լալայանը, Ղ. Ալիշանը, Ս. Բարիխուդարյանը, Գր. Գրիգորյանը՝ հայերեն, նաև ոուսերեն լեզուներով²: Սույն ուսումնասիրության շրջանակներում բովանդակությունից զատ, մեզ չեն հետաքրքրում արձանագրության առանձին բառերի տարրներցումները կամ բառերի մոտ նշված հարցականները, որոնք, ասենք, կան Ալիշանի մոտ: Մեզ համար առավել ընդունելի է պրոֆ. Գր. Գրիգորյանի հրապարակած այդ արձանագրության ամբողջական տեքստը՝ մեկնաբանություններով հանդերձ: Այնտեղ կարդում ենք. «... որ Եկեղեցի տվի շինել Սիրանէս վարդպետին ու գՅալէճորի Շնիերոյ նրայ հայրենիք տվի, ու ինչ գեկեղեցին լմնեցին խիլայ կատարաք: Շ: (500) սպիտակ, ի այն խիլային փոխան զԱղազար Ըղուերծեցին տվաք՝ նրանց հայրենիք լինի...»³: Ուրեմն վարդպետ Սիրանեսին որպես աշխատանքի վարձատրություն Տարսայիծ իշխանը, անտարակույս վարդպետ Սիրանեսի իսկ խնդրանքով, որպես «հայրենիք»՝ ասյինքն ժառանգական իրավունքով նրան կալվածք-տարածքներ է տալիս ներկայիս Գորիսի Շինուհայր և Յալիճոր գյուղերի սահմանների հատման վայրում: Նույն բովանդակությամբ, սակայն ավելի հակիրծ ու սեղմ արձանագրություն կա և Յալիճոր գյուղի Խաչին խուր կամ Վնսար (Վանասար) վայրում կանգնած խաչքարի պատվանդանին⁴: Նույն Խաչին խութում Սիրանեսը իր եղբայր Յգարմելի հետ իրենց ծնողների՝ հայր Գոքայի և մայր Թենի-

¹ Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, թարգմ. ներած. և ծանոթագր. Ա. Արրահայանի, Երևան, 1986, էջ 335:

² Տես Զալալեանց Ս., ճանապարհորդութիւն ի Մեծն Յայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 172, Լալան Ե., Ազգագրական համելս, գիրք 26, Թիֆլիս 1898, էջ 503, Ալիշան Ղ., Սիսական, Վեմետիկ, 1893, էջ 191: Բարիխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, գիրք 3, էջ 234-235, Գրիգորյան Գր., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 123, Գրիգորյան Գր., Օչերку истории Сюника IX-XV вв, Ереван, 1990, 319:

³ Գրիգորյան Գր., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 123:

⁴ Տես Բարիխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, ի լl, Երևան, 1960, էջ 52:

կայի հիշատակի խաչքարի ճակատին արել են չորստողանոց արձանագրություն¹: Վերոհիշյալ արձանագրություններին առնչված բոլոր ուսումնասիրողները միակարծիք են, որ Սիրանես ճարտարապետ-վարդպետը եղել է բնիկ Յալիձոր գյուղացի²:

Սիրանես վարդպետին վերաբերող արձանագրությունները որոշակի արժեքավոր նյութեր են պարունակում միջնադարյան Յայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման համար:

Ուսումնասիրողների մոտ տակավին տարակարծություններ կան, թե որքան է կազմել և ինչ սահմաններում է ընդգրկվել Շինուհայր և Յալիձոր գյուղերի հողատարածքում որպես հայրենիք Սիրանես ճարտարապետին շնորհված տարածքը: Ոմանք կարծում են, որ ճարտարապետին տրվել է նաև Շինուհայր գյուղը³: Պրոֆ. Գր. Գրիգորյանը, Ելմելով վիմագիր արձանագրություններից ու դրանց տեղադրությունից, հստակ տալիս է վարդպետին նվիրված հողատարածքի անվանադիր սահմանները և գտնում է, որ վերոհիշյալ երկու գյուղերն ամբողջապես չեն տրվել Սիրանեսին, քանի որ դրանք արդեն իսկ նույն իշխանի կողմից այլ հինգ գյուղերի հետ տրված էին Տարեկի վաճրին:⁴ Սիրանեսին տրված կալվածքը եղել է Որոտան գետի գեղատեսիլ կիրճում, Շինուհայր և Յալիձոր բնակավայրերի արանքում: Գնել Գրիգորյանը համամիտ է այս կարծիքին ու նույնիսկ փորձել է տալ տարածքի մոտավոր չափերը՝ 10-20 հեկտար, «... որի մի մասը հարմար էր անասնապահության, իսկ մյուս ցածրադիրը՝ այգեգործության համար: Այնտեղ նա (Սիրանեսը – Ս. Յ.) հաստատել է ազարակի բնույթի տնտեսություն, շինել բնակարաններ, մատուռ: Այնտեղ են գտնվել Սիրանեսի տոհմի անդամների տապանաքարերը»⁵:

Իշխան Սմբատ Օրբելյանի նախաձեռնությամբ ու հանձնարարությամբ, Սիրանես ճարտարապետը վերակառուցել է Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցու գավիթը⁶: Գավիթի արևանդյան ճակատի վերնամասում լուսամուտի կիսաշրջանաձև, խորանիստ ճակատակալի վրա Սիրանեսը արել է մի հրաշագեղ պատկերաքանդակ, որն իր լուծումներով դուրս է գալիս ավելի բարձր հորիզոններ, քան հայ ազգային քանդակագործության

¹ Նույն տեղում, էջ 53:

² Տես Բարիսուղայան Ա., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 75:

³ Գրիգորյան Ա., Վայոց ձորի և Որոտանի մամրամկաշուրջում XIII – XVII դդ., Երևան, 2003, էջ 150:

⁴ Գրիգորյան Գր., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 124:

⁵ Գրիգորյան Գ., Նվիրատվություններ Ամիր Եկեղեցիներին ու վաճքերին IX – XIV դդ., Էջմիածին, 2002, էջ 112:

⁶ ԿՄԴ հ. 8, Մանագական Ա., Երևան, 1972 թ., էջ 378:

շրջանակներն են¹: Այն աղերսներ ունի Բղենո-Նորավանքի բարձրաքանդակների հետ:

Սիրանեսը եղել է Տարսայիծ Օրբելյանի «Դրան»՝ իշխանական տան ճարտարապետը, ունեցել օգնականներ: Նա կառուցմեր է թողել նաև Արատեսի վանքում, ուր Տարսայիծ իշխանը շինարարական աշխատանքներ ծննդարկեց՝ այն դարձնելու Նորավանքի եպիսկոպոսական ամառանոցի վայր: Որ Արատեսի գեղատեսիլ գավիթներից լավագույնը կառուցել է Սիրանեսը, իր Գրգորիկ օգնականի հետ², անտարակուտելի է: Դա է վկայում նաև համալիրը իհմովին ուսումնասիրած Ս. Բարիսուդարյանը՝ ասելով, որ այստեղ բժիշկ Քաջերումին գավիթի վերին կամարից ընկած մի քարի վրա կարդացել է. «ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՍԻՐԱՆԵՍԻՆ», քարն այժմ չկա, անհետացել է: Նույն գավիթի հյուսիս-արևմտյան մույթի խոյակի վրա գրված է. «ԳՐԳՈՐԻԿ»³: Արատեսի գավիթի շինարարական աշխատանքներն ավարտվել են կամ 1268 թ. կամ 1270 թ.:

Սիրանեսի կառուցած գավիթը Արատեսի վանական համալիրի զարդն է և հայ ճարտարապետության մեջ ունի ուրույն տեղ՝ իր անկրկնելի խաչվորվող կամարներով: Գավիթն ունեցել է կենտրոնից ելնող շքաքարային մշակումով երդիկով զմբեթ:

Սիրանեսը սոսկ արհեստավոր քարգործ-վարդպետ կամ շինարար ճարտարապետ չի եղել: Նա ունեցել է տեսական խոր գիտելիքներ և ըստ պրոֆ. Գր. Գրիգորյանի դասավանդել է Գլածորի համալսարանում. «... - կարելի է ենթադրել, որ Գլածորի համալսարանում դասավանդվել է նաև ճարտարապետություն, որը հավանորեն ուսուցանել են Օրբելյանների պալատական ճարտարապետներ Սիրանեսը և նրա տաղանդավոր աշակերտ Մոմիկը»⁴: Սիրանեսի գործի շարունակողը եղել է նրա աշակերտ Մոմիկը, որը ավարտին հասցրեց Անաղուի Նորավանքի չքնաղագեղ համալիրը: Իսկ Սիրանեսը, ունենալով առաջացած տարիք, որոշում է իր կյանքի վերջալույսն անցկացնել ծննդավայր Յալիձորում, ստանձնելով իրեն շնորհված կալվածքի տնօրինումը: Կասկած չկա, որ նա մասնակցություն է ունեցել իր ծննդավայրում կամ կալվածքում շինությունների, աղբյուրների կամ կամուրջների, խաչքարերի ստեղծնան աշխատանքներին:

¹ Տես Թրիստոնյա Յայաստան, համրագիտարան, Յայրաբյան Ա., Երևան, 2002թ., էջ 811:

² Գրգորիկ անվանը համրիպում ենք Յալիձորի Ծոցիկ վայրում կամքմեցված խաչքարի արձանագրությունում: Թերևս նա էլ է եղել հայիձորցի:

³ Բարիսուդարյան Ստ., Դիվան հայ վիմագրության, հ. 3-րդ, Երևան, 1967թ., էջ 125:

⁴ Գրիգորյան Գր., ճշկ. աշխ., էջ 163:

Պատմաբանները անդրադառնալով Սիրանեսին հիշատակող արձանագրություններին, ուշադրություն են դարձրել ճորտատիրությանը բնորոշ մի երևույթի արձանագրմանը, ըստ որի կալվածքների հետ մեկտեղ, որպես հայրենիք, Սիրանեսին է տրվել Աղազար Ըղվերծեցին, որպեսզի նա որդոց որդի ծառայի¹: Վերոհիշյալը վիմագրական եզակի փաստերից է և վկայում է Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններում ճորտատիրության երևույթի առկայությունը, թեաբետ այն կրել է ոչ մասսայական, մասնավոր բնույթ:

Հայ մարդու շինարարական-ճարտարապետական տաղանդը երկրամասի բնակիչների մոտ արտահայտվել է նաև նոր ժամանակներում: Միջնադարյան հայ երևելի ճարտարապետ-շինարարի ժառանգական գեներն արտահայտվել են Գորիս քաղաքի շինարարության ու ճարտարապետության մեջ: Պատահական չէ, որ Գորիսը մասնագետների կողմից համարվել է 19-րդ դարավերջի հայ ճարտարապետության գոհար²:

Ամփոփում

13-րդ դարում Սիրանեսը եղել է հայ քանդակագործության նշանավոր դեմքերից մեկը: Նա ծնվել է Գորիսի շրջանի Յալիձոր գյուղում: Անաղուի Նորավանքում նա կառուցել է սուրբ Գրիգորի անվան եկեղեցին: Այդ մեջ գործի համար նա Տարսայի Օքբելյան իշխանից հայրենի Յալիձորում կալվածք է ստացել: Այդ նվիրատվության մասին արձանագրությունը պահպանվում է ինչպես Անաղուի Նորավանքում, այնպես էլ Յալիձորում:

Սիրանեսի աշակերտն է եղել նշանավոր հայ քանդակագործ Մոմիկը:

¹ Ընդվերծը Սյունիքի Ծղուկ գավարի գյուղերից է: Ըստ Ա. Դասրաբյանի 16-17-րդ դդ. այն վերանվանվել Դարբաս-Դարբաս (Դասրաբյան Ա., Պատմահնագրություններ, Երևան, 1985, էջ 137, տես նաև Դավթյան Շ., Սիրիանի բնակավայրերի պատմությունը, Երևան, 1997, էջ 52):

² Արյունյան Բ., Կամենная летопись армянского народа, Ереван, 1985, стр. 124-125: Գորիսում ուրույն ճարտարապետներ են ապրում նաև այսօր: Նրանցից մեկն է շնորհաշատ Ալաղա Զաքարյանը, որն իրականացրեց Գորիս քաղաքի Սրբագործությունը՝ կառուցումը, տվեց Գր. Տաքանացուն նվիրված հուշակոթողի ճարտարապետական ամերկնելի լուծումը և այլն:

Сиранес вардапет из села Алидзор

Сергей Ахвердян

Резюме

Ключевые слова: Вардапет (мастер), Амагунский Нораванк, университет Гладзора, Момик.

Сиранес был одним из выдающимся личностей армянского зодчества 13 в. Родом он был из села Алидзор Горисского района. Он построил церковь св. Григора в Амагунском Нораванке и от князя Тарсач Орбелян в родном Алидзоре получил земельный участок. Об этом дарении сохранились каменные надписи и в Амагунском Нораванке и в Алидзоре.

Учитником Сиранеса был талантливый армянский зодчий Момик.

Siranes Vardapet from the village of Halidzor

Sergey Hakhverdian

Summary

Key words: Vardapet (Master), Noravank of Amaghu, Halidzor, the university of Gladzor, Momik.

One of the most outstanding people of the 13th century's architecture is Siranes. He is a descent of the village Halidzor, of Goris region. He built St. Grigor church in Amaghu at Noravank and in return he got a piece of land in his native village Halidzor from the Prince Tarsayitch Orbelyan in return got a land as a gift. Lithograph records about that donation have been preserved both in Amaghu and in Halidzor. The alented armenian architect Momik used to be Siranos' apprentice.